

«Գործարար վարչարարություն»/կառավարում/ մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գալիք՝ 2020-2021 ուսումնական տարում շարունակում է գործել մագիստրոսի որակավորում շնորհող «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագիրը:

Հանրային կառավարման համակարգը, որպես բազմաչափ երևույթ, ընդգրկում է պետական կառավարման մարմինները, դրանց արդյունավետ աշխատանքի համար պատասխանատու պետական պաշտոնյաներին, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակությունը: Պետություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված համագործակցությունն էլ դրված է հանրային կառավարման հիմքում, որտեղ յուրաքանչյուր դերակատար իր ազդեցությունն ունի հանրային կառավարման համակարգի արդիականացման (այսուհետև՝ ՀԿՀԱ) գործընթացների վրա: Հանրային կառավարման դերակատարներ են՝ պետական կառավարման տարբեր մակարդակների ինստիտուտները, քաղաքական կուսակցությունները, խոշոր գործարարությունը (բիզնես), ՋԼՄ-ները, հասարակական կազմակերպությունները և շարժումները, կառավարող ընտրանին, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակությունը, անհատները և այլն:

«Գործարար վարչարարություն» ծրագրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարեցտարի տարբեր ոլորտներում ավելանում է կառավարման ընդհանուր հմտություններին լրջագույնս և լավագույնս տիրապետող անձանց պահանջարկը, որոնք կտիրապետեն նաև տնտեսության և գործարարության կազմակերպման ու կառավարման գործիքներին: Հաշվի առնելով հենց այս հանգամանքը այսօր էլ աշխատաշուկայում ամենապահանջված մասնագիտությունների շարքում հանրային կառավարումն ու գործարար վարչարարությունը առաջնային հորիզոնականում են: Կրթական ծրագրերը պատրաստվում են՝ ելնելով թե ազգային և թե միջազգային ժամանակակից լավագույն փորձի համադրությունից: Արդյունավետ կառավարման շնորհիվ ցանկացած, անգամ փոքր բյուջե ունեցող բիզնես հնարավորություն ունի մեծ քայլերով առաջ անցնել, իսկ մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով գրագետ կառավարման շնորհիվ իրատեսական է կարճ ժամանակում պահանջված դարձնել կազմակերպությունն ու անհատին:

Հաշվի առնելով՝ փոքր բիզնեսից մինչև տնտեսապես ուժեղ երկիր կառուցելու

հարցում կառավարման գիտելիքներին տիրապետող մասնագետների կարիքն ավելի քան մեծ է, կառավարում մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրերը նպատակադրված են հենց նման մասնագետների պատրաստմանը, իսկ այս մասնագիտության շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել այնպիսի դիրք և կարգավիճակ, որ միայն իրենց ճիշտ կառավարման շնորհիվ կարող է զարգանալ տվյալ կազմակերպությունը, նրանք կարող են լինել թելադրող բիզնես հարթակում և մասնակից դառնալ տնտեսապես առավել ուժեղ երկիր կառուցելու գործում:

Գաղտնիք չէ, որ կառավարչի (մենեջերի) մասնագիտությունը ներկայումս էլ շարունակում է մնալ ամենապահանջվածներից, ինչպես մեր երկրում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Բացի այդ, վերջին շրջանում հայաստանյան կազմակերպությունները աստիճանաբար ձեռք են բերում միջազգային նշանակություն, զարգացնում են միջազգային կապերը և համագործակցությունը, և այս առումով կառավարման մասնագիտությամբ կադրերի պահանջարկը շարունակում է աճել: Ներկայում կառավարում մասնագիտությամբ ու դրա մասնագիտացումներով կադրերի պատրաստումը լայն տարածում է ստացել: Բայց միննույն ժամանակ, կառավարչական հմտությունների որոշակի մակարդակ ունենալը ցանկալի է կազմակերպության բոլոր աշխատակիցների համար:

Մենեջերների պատրաստման մագիստրոսական կրթական ծրագրերը մշտապես կատարելագործվում են՝ ստանալով առավել գործնական ուղղվածություն: Հատուկ մասնագիտական դասընթացների դասավանդման համար հաճախ հրավիրվում են ոլորտի առաջատար մասնագետներ, ովքեր իրենց փորձը փոխանցում են ուսանողներին: Գործնական և սեմինար պարապմունքները փորձ է կատարվում անցկացնել գործարար խաղերի, իրավիճակային վերլուծությունների, խմբային աշխատանքների, արդի հիմնախնդիրների քննարկման միջոցով:

Նշված մասնագիտություն ձեռք բերելուն ուղղված ծախսերը հարկավոր է դիտարկել որպես ներդրումներ, որոնք հետագայում հնարավորություն են տալու շատ ավելի մեծ երկարաժամկետ արդյունքներ ստանալու:

Մասնագիտության նկարագիր

Գործարարության զարգացումը ցույց է տալիս, որ լավ կառավարիչների նկատմամբ պահանջարկն աճում է ավելի արագ, քան նրանց պատրաստելու հնարավորությունները:

Փ. Դրաքեր

«Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ որակյալ կադրերի պատրաստման գործում հիմնական խնդիրը բովանդակային, մեթոդական և հայեցակարգային ուղղությունների տրամաբանական միավորման շնորհիվ ուսանողներին հանրային կառավարման և գործարար վարչարարության

ոլորտներում մասնագետ պատրաստելն է, որի էությունը նապատակների սահմանումն է և այլ մարդկանց միջոցով այդ նպատակներին հասնելը: Մենեջերի աշխատանքի բովանդակությունը պատկերավոր կերպով կարելի է ներկայացնել որպես որոշակի խնդիրների հավաքածու, որոնք օրակարգում են և համապատասխան լուծում են պահանջում:

Ընդհանուր առմամբ, կառավարիչը մի մարդ է, ով պետք է պլանավորի, շահադրդի, կազմակերպի և վերահսկի այլոց աշխատանքը, սակայն իր գիտելիքի և ունակությունների կիրառման դաշտը կարող է տարբեր լինել՝ արդյունաբերություն, տրանսպորտ, զբոսաշրջություն, ֆինանսներ և այլն: Կառավարիչը պետք է կարողանա կազմակերպել անհատական և խմբային աշխատանքը, ընդունել կառավարչական որոշումներ, ապահովել արդյունավետ կոմունիկացիոն հոսքեր կազմակերպության ներսում և արտաքին աշխարհում, հարթել կոնֆլիկտներն ու, բնականաբար, ձևավորել այնպիսի պայմաններ, որոնք առավել բարենպաստ կլինեն առաջադրված նպատակներին հասնելու համար:

«Մենեջմենթ» մասնագիտությամբ կադրերի պատրաստման առանձնահատուկ կողմերից կարելի է նշել այն, որ մենեջերները տիրապետում են մի մասնագիտության, որում կենտրոնական տեղ է զբաղեցնում մարդը՝ իր յուրահատուկ շահերով, հնարավորություններով և արժեքային համակարգով:

Աշխատանքի հնարավորություններ

«Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսները բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ պետական կառավարման համակարգում որպես առաջատար մասնագետներ, տնտեսության տարբեր ոլորտի կազմակերպություններում (առևտրային և ոչ առևտրային), ֆինանսավարկային հաստատություններում, Կենտրոնական բանկում, քաղաքացիական ծառայությունում, ճյուղային և ֆունկցիոնալ նախարարություններում որպես տարբեր մակարդակի ղեկավարներ, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների ֆինանսական, գիտահետազոտական, տեղեկատվական, վերլուծական բաժիններում որպես տնտեսագետ, մենեջեր, վերլուծաբան, նաև հանրային կապերի կառավարման գծով մասնագետ:

Կառավարում մասնագիտությունն առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությանը, որն ուղղված է կառավարման հիմնական գործառույթների՝ պլանավորման, կազմակերպման, շահադրդման և վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև հատուկ գործառույթների կիրառմանը և կառավարչական գործունեության գիտագործնական խնդիրների լուծմանը:

Մասնագիտական գործունեության օբյեկտներն են պետական և մասնավոր կազմակերպությունները, դրանց ստորաբաժանումները, միջազգային

կազմակերպությունները և այլն:

«Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսները հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող են կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝ կառավարչական, կազմակերպչական, տնտեսական, պլանային, ֆինանսական, մարքեթինգային, տեղեկատվական, վերլուծական, նախագծային- հետազոտական, ախտորոշման, մեթոդական, խորհրդատվական և այլն: